

† ԲԺ. ԳԼՈՐԳ. ՏԱՏԵԱՆ

Մեր հասարակական մաքի երերման, ղեկավարող սկըզ-
բունքների բացակայութեան և ընդհանուր ապատիայի այս շըր-
ջանում բժ. Տատեանը ներկայանում էր իբրև մէկը այն փոք-
րաթիւ բացառութիւններից, որոնք չնորհիւ իրանց ամբողջա-
ցըրած բնաւորութեան, գիտակցական կեանքով «ապրելու» և
տանջուելու» խոր տենչչ՝ կարողանում են լուծել յաշմանդամ
յունտեսութեան կապահքները և մի անգամ գտնելով իրանց
բաւարարութիւն տուող մի հասարակական իդէա՝ ամբողջապէս
տրւում են նրա սպասաւորութեան:

Դեռ մանկութեան հասակից բաղդը ժպտում է բժ. Տա-
տեանին նրանք, որ հայրենի Գորւայ վրացախօս հտօնարակու-
թեան մէջ գտնուում է այնպիսի մի հմուտ ղեկավար և սիրող
դաստիարակ, ինչպիսին էր յայտնի քարոզիչ և հասարակական
գործիչ Տէր-Ստեփան քահանան:

Այս քահանայի բարոյական ազգեցութիւնը իր սանի վրայ
այնքան ճակատագրական էր, որ Քութայիսի գիմնազիան ա-
ւարտելուց յետոյ անցնելով Մոսկուայ՝ Տատեանը նախ քան
համալսարան մտնելը՝ ամբողջ մի տարի նուիրում է հայոց լե-
զուի լուրջ ուսումնասիրութեան և որոշ ուղղութեամբ ծրա-
գրուած ընթերցանութեան, մի հանգամանք, որ մեր ընդհանը-
րապէս անգոյն ուսանողութեան շրջանում հերոսական քաջա-
գործութիւն է համարւում: Յաջորդ տարին մտնելով համալսա-
րանի բժշկական բաժինը՝ Տատեանը մինչև վերջը կարողանում
է գրաւած պահել առաջնակարգ և խիստ որոշ համոզմունքներ
դաւանող ուսանողի դիրքը, համոզմունքներ, որոնց պաշտպա-
նելու և քարոզելու համար էլ զինուած էր իր ուսուցիչ Տէր-
Ստեփան քահանային արժանի պերճախօսութեամբ:

Համալսարանն աւարտելոց յետոյ նա վերադառնում է հայրենի Գորի քաղաքը, որտեղ շրջապատուած տեղական ազգաբնակութեան ընդհանուր համակրանքով՝ շատ կարճ ժամանակում ոչ միայն ձեռք է բերում հմուտ և սրտացաւ բժշկի ժողովրդականութիւն, այլև գառնում է այնպիսի մի կենարոնական անձնաւորութիւն, որի մասնակցութիւնը անխուսափելի է դառնում ամեն մի հասարակական հարցում:

Բայց նրա ուսանողական տարիների հոչակը չուտով հանում է նրան Գորւայ նեղ շրջանից, և ահա հետեւել 1900 թ. ամառը ստանում է Շուշւայ թեմական գպրոցի տեսչութեան առաջարկութիւնը. և մինչդեռ հասարակական աւելի լայն գործունէութեան տեսչով վասուած երիտասարդը անմիջապէս համաձայնութիւնը տալուց յետոյ պատրաստում էր ճանապարհ ընկնել իր նոր պաշտօնատեղին, անսպասելի կերպով ստանում է մի նոր հեռագիր, որով նոյն պարոնները այժմ էլ առաջարկում են նրան նեղութիւն չը կրել ճանապարհուելու, որովհետեւ յաջունուել էր մի տեսչուցու վարդապետ, որ յետոյ այնքան «հոչակուեց» մեր գպրոցական ասպարիզում:

Այս առաջին անյաջողութիւնը կարծէք մի նախաբան էր այն դառն հիսութափութեան, որ պատրաստել էր նրա համար մեր միւս գաւառական թեմական դպրոցը:

Նոյն 1900 թիւը մի նշանաւոր տարի էր Երևանի թեմական գպրոցի կեանքում: Նոր էին վերջացել գպրոցի երկու հոգենոր զեկագրաների մէջ եղած այն կոհենները, որոնք յուզելով գպրոցական կեանքը՝ իրանց մանրամասնութիւններով գայթակղեցուցիչ էին դարձրել ոչ միայն մատադ սերնդի, այլ նոյնիսկ հասարակութեան մի մասի համար:

Իշխանութիւն ունեցողները շահագրգուած էին վնասուած վարկը վերականգնելու, այդ պատճառով էլ զիջող էին դարձել ժողովրդական ներկայացուցիչների—հոգաբարձական մարմնի վերաբերմամբ:

Օգտուելով գրութիւնից՝ հոգաբարձութիւնը նոյն տարւայ սեպտեմբերին տեսչի պաշտօնով հրաւիրում է բժ. Տատեանին, որ ուրախութեամբ տալիս է իր համաձայնութիւնը և շտապում է Երևան:

Երևանի հայ հասարակութիւնը շատ պատճառներ ունէր մի գիւտ համարելու իր գպրոցի համար երիտասարդ տեսչին, որ իր զարմանալի տակտով, գպրոցի առաջադիմութեան նուիրուած գործունէութեամբ կարողանում էր վերականգնելդպրոցի վարկը, բարձրացնել աշակերտների մտաւոր և բարոյական աշխարհի աննախանձելի դրութիւնը:

Վաղուց չը տեսնուած եռանդ և աշխոյժ մացնելով դպրոցի ընթացիկ կեանքի մէջ, պարբերաբար անձամբ առողջապահական զրոյցներ վարելով աշակերտների հետ, Տատեանը մանկ. և հոգ. ժողովների աջակցութեամբ ձեռնարկեց և դպրոցի ծրագրի մշակման, որ յոյս ունէր յաջորդ ուսումնական տարւանից իրագործել նոր և թարմ ոյժերից բաղկացած ուսուցչական կազմի միջոցով:

Բայց դժբախտաբար երկար չը տեսից այդ ոգենորուած գործունէութեան շրջանը. հէնց առաջին ուսումնական տարւայ վերջը առաջ եկան ազգակցական և բարեկամական շահերի նկատումները Երևանի դպրոցից անխուսափելի ինտրիգաների հետ, և Տատեանը ստիպուած եղաւ իր վերջին հրաժեշտը տալու դպրոցին:

Խեղճ երիտասարդ. յափշտակուած առաջին յաջողութեամբ, շարունակ լսելով իշխանութիւն ունեցողի «առաւել լաւ» բաջական խօսքերը, որով խրախուսաւում էր նրա իւրաքանչիւր ձեռնարկութիւնը, նա սիրում էր նոյնիսկ հրապարակով խօստավանել, որ ինքը «մտել է դպրոցը Լիւտերի հաւատով, բայց դպրոցից դուրս է գնալու լուսաւորչի հաւատով»: Սակայն գառն իրականութիւնը շուտով եկաւ հիասթափեցնելու ոգեռուած երիտասարդին:

Երևանից Տատեանը տեղափոխում է Բաթում իր մասնագիտութեամբ պարապելու, բայց ծանր հիւանդանալով մաւլարիայով վերադառնում է հայրենիք—Գորի, որտեղ հիւանդութիւնը արագութեամբ զարգանալով՝ յունիսի 29-ին վերջ է զնում 30 տարեկան երիտասարդի յոյսերով լի կեանքին:

Եւ յուլիսի 3-ին կայացած թաղումը, որին մասնակցեց ամբողջ Գորւայ ազգաբնակութիւնը առանց ազգի և կրօնի խորութեան, մի նոր ապացոյց էր այն ցաւալի փաստի, որ մեր սակաւաթիւ հասարակական գործիչների շարքից պակասեց մի երիտասարդ և կարեոր ոյժ: